4. Ընջուկատէղը[10] բաղկացած էր երկու, սովորաբար կանաչ, ղանավուզից կամ կարմիր թավիշից եռանկյունաձև կտրած կտորներից, աստառած էր։ Եռանկյունիների երեսները ասեղնագործված էին լինում։ Երբեմն առջևից վրա էին կարում տափակ արծաթե ճարսճաճուցճէր՝ ուլունքներ։ Եռանկյունիների հիմքին կարում էին ղայթաճի վրա շարած արծաթե կամ ոսկե պուծուծճէր՝ բոժոժներ, վերաբնակվածներն ասում են՝ թօփէր։ Երկու եռանկյունիների վերին—գլխի և ստորին—ծնոտի տակի ծայրերն իրար հետ միացնում էին ժապավեններով, իսկ ազատ մնացած երրորդ ծայրերից կարված էին լինում fըղէր ծոծրակին կապելու համար[11]։

5. Քէթկալը մի քառակուսի սպիտակ կտոր է, որը կապելիս դէղաչ՝ եռանկյունի էր ծալվում, իսկ վերին մասում չիճ-չիճ՝ դարսերով ծալեր անում։ Պառավներինը լինում էր սև և լայն։

6. Կօլիճ՝ կզակի չարղաթը—քառակուսի թաշկինակ է, գունավոր, գըլխավորապես կարմիր, կանաչ կամ նարնջագույն։

7. Լէչագը 4 մ սպիտակ կտոր—մաղէպալաճ՝ մաղապոլամ երկու մասի բաժանված և քառակուսի եզրերով իրար հետ կարված։ Գործ էին ածում գլխավորապես մեծ կանայք։

8. Զաճգյըլը արծաթից կամ ոսկուց էր լինում։ Մի լայն գոտու նման է, երեք ծակօտկէճ չիֆթիչի տախտակներից բաղկացած, որոնք իրար հետ շղթաներով են միացած։ Մի ծայրին ուներ օղակ, մյուսին՝ կէռիկ՝ չաճգյլ։ Օղակը կարված էր լէչագի կամ չարղաթի մի ծայրին— տուճղիճ՝ անկյունավոր ծայրին։

9. Զարսավը բրդե կամ մետաքսե մեծ երկար շալ է՝ 2 մ × 2 մ, մէտակ։

10. Կօլտաճը շորի մեջ սուճուխի ձևով փաթաթած բամբակ կօլի տակ դնելու համար։ Գործածում էին միայն պառավները։

11. Չարղաթը գործածում էին միայն ջաճէլճէրը։ Սա մետաքսե կարմիր կտորից մեծ քառանկյունի մէտակ էր, որը գլխին գցելիս դէղաչ էին ծալում։ Մետաքսե չարղաթը հետագայում փոխարինվեց բրդե շալավ, նույն մեծությամբ և նման գործածությամբ։

Կլօխը չիճէլու ձևը։ Մազերը բաժանում էին չորս մասի, նախ քթի ուղղությամբ առջևից դեպի ծոծրակն երկու կեսի, ապա ականջից մյուս ականջը, աջից ձախ ուղղությամբ և ճօթ էին անում՝ բաժանում։ Ետևի՝ fամակի երկու մասերը ծամ էին անում, ծամերի տակ մի մատի չափ խուզում էին, որ խզի՝ ծոծրակի տակը ճարի վօչ։ Առջևի մազերը ճլօրըմ ըճ՝ ոլորում են, որ պօչէր, խօպօպճէր դէճէ։ Սրանից հետո գլխին գցում էին փոքր դէղաչ մէտակը, որի ծայրերը ծնոտի տակ իրար վրա բերելուց հետո տանում էին ետ և խզի տակ կապում, իսկ սրա վրա դնում էին պալտիճ, որի ծայրի թելերը տանում էին կօլի տակով և գլխի գագաթին հանգույց անում։ Պալտիի վրա գցում էին երկրորդ միջճակ դէղաչ մէտակը՝ միջին չափի և առաջինի ձևով կապում խզի տակ։ Պալտիի վրա առջևից կապում էին թըփատէղը, որի քողերը քամակովը բերում չաճի՝ ծնոտի տակն ու կապում։ Այնուհետև մազերի պօչէրը ճըլօրած անց էին կացնում պալտիի fօղէրի վրա փաթաթելով մինչևվի կըլխի՝ վերջանա։ Պալտիի և պօչէրի վրա դնում էին ընջուկատէղճ, այնպես,

---

[10] Ընջուկ՝ ականջ։ Զաճաքաճդ բառը այստեղ ուշ է մտել։

[11] Երբեմն ծոծրակին հասնող անկյունները միացնում էին իրար առանց ժապավենի։